Թեստ 3

1-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

1. Գաղտնավանկի *ը-ն ճիշտ է տեղադրված*

   1) հայտ(ը)նվել
   2) փրկ(ը)վել
   3) ճ(ը)նշվել
   4) խմբ(ը)ել

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

   1) խոնար...վել, ընդ...ատել, հայթ...այթել (հ կամ -)
   2) գ...տվել, դ...բախտ, բևեկնախե... (ժ կամ շ)
   3) որ...անոց, ա...խազ, ար...իազօծ (բ կամ փ)
   4) ս...ինքս, աս...ալտ, նա ... թամուղ (վ կամ ֆ)

3. Հատուկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող շարքն է՝

   1) ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, ԿԱՐՄԻՐ ԾՈՎ
   2) ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, ՊԱՐՍԻՑ ԾՈՑ
   3) ՄԵԾ ՄԱՍԻՍ, ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
   4) ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ

4. Դարձվածային իմաստ ունեցող բառակապակցությունների շարքն է՝

   1) արջի ծառայություն, ոտքերն ընկնել
   2) գիրք գրել, ճանապարհը ոտքով անցնել
   3) դանդաղ մարել, պատերը ներկել
   4) արագ պատրաստվել, կանխիկ վճարել

5. Ածանցավոր բառերի շարքն է՝

   1) շաղկապ, կամացուկ, պահածո
   2) պատմաբան, թերակղզի, կարոտախտ
   3) փոքրիկ, մայրական, լողափ
   4) գիրք, խճուղի, վայրենի

6. Համանունների բացատրության սխալ կա՝

   1) **հազար** - բույս, **հազար** - թիվ
   2) **այր** – քարանձավ, **այր** – տղամարդ
   3) **սուր** – սրածայր, **սուր** – սրամիտ
   4) **գանձ** – հարստություն, **գանձ** – հոգևոր երգ

7. *Ան* հոլովման ենթարկվող բառերի շարքն է՝

   1) անկյուն, գարուն, ուսում
   2) ամառ, շարժում, ծունկ
   3) դուռ, լարում, ուրախություն
   4) ձմեռ, որմնասյուն, ձուկ

8. Վերաբերական կա

   1) Դուռը հանկարծ բացվեց:
   2) Կարծես թե դարձել եմ ես տուն...
   3) Արդյոք հիշե՞ց նա իր մորը սգավոր:
   4) Ցուրտ քամին արդեն պուրակ է մտնում:

նախադասության մեջ:

9. Պարզ բայերի (առանց բայական ածանցի) շարքն է՝

   1) գրել, բացվել, արձակել
   2) ազատել, մատուցել, ցատկոտել
   3) հարգել, ազատել, նվագել
   4) երազել, հյուրասիրել, այրել

10. ..... , ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ

նախադասությունը քերականորեն և տրամաբանորեն ճիշտ կստացվի

1) Որևէ բան պատմելիս
2) Չնայած որևէ բան էր պատմում
3) Երբ որևէ բան էր պատմում
4) Որևէ բան պատմելու ժամանակ

տարբերակը տեղադրելու դեպքում:

11. Համեմատություն պարունակող հատվածն է՝

1) Ժայռից մասուր է կաթում,
   Կարմիր սարսուռ է կաթում...
2) Ամպը ամպի մահն է լալիս,
   Հողն արցունքով թրջում:
3) Շոգը վիթխարի ուղտի նման
   Չոքել է բակում իր շեկ շնչով...
4) Իմ սիրտը լեռներում է, այստեղ ծանր եմ շնչում,
   Իմ սիրտը լեռներում է, ուր քարայծն է թռչում...

12. Կետադրական սխալ կա

1) Անշարժ, գեղեցիկ գլուխը ուսին թեթևակի ծռած, լռիկ ու ինքնամփոփ՝ նա հիշեցնում էր հին դպրոցի մի նկար:
2) Թվում էր՝ մահաբեր մի խորշակ, ամեն ինչ ջնջող, ավերող մի չար ուժ ամայացրել էր եռուզեռով լի քաղաքը:
3) Հավաքված էին այդտեղ միաբանության գրեթե բոլոր անդամները՝ երիտասարդ ու ծեր:
4) Դիմավորողներից երկրորդը քաղաքի բերդապետն էր տարեց, ճաղատ և գիրուկ մի զորական:

նախադասության մեջ:

13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Եվ ամերիկյան ընթերցողները զարմացան ու հիացան, որովհետև Սարոյանը մինչ այդ իրենց անծանոթ մի երակ էր բերում գրականության մեջ՝ հայկական ոգու երակը:
2. Հիրավի, արժանավոր մի շառավիղ է Վիլյամ Սարոյանը, որ, սակայն, ընկել է մի այլ միջավայր ու այլ մի դար:
3. Ամեն անգամ, երբ ես Սարոյան եմ կարդում, ինձ այնպես է թվում, թե նա արժանավոր շառավիղն է մեր անանուն ու անհայտ գուսանների, որոնք դարերի խորքում մեր հանճարեղ էպոսն են հյուսել:
4. Մտնելով ամերիկյան գրականության ասպարեզ՝ նա ժողովրդական ասացողների պարզ ու խոր խոսքով սկսեց իր միջավայրի ու դարի սքանչելի էպոսները հյուսել:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Իշխանության կարգադրությամբ այդ գործարարից բռնագրավեցին հարյուր հազար դրամ:

Պատասխան՝ սխալ է՝ _____
պետք է լինի՝ _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Այդ սնապարծը այնպես էր հավատացած իր հետագա հաջողությունների մեջ, որ արդեն արհամարհանքով էր վերաբերվում ընկերներին:

Պատասխան՝ *սխալ է՝* _____
պետք է լինի՝ _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Երբ շունը դռանը ..... ու ..... կլանչեց, տղան, անկողնուց ..... , պատուհանից տեսավ բլրի վրա հավաքված գայլերի ..... :

(տագնապել, ոհմակ, դիպչել, դուրս թռչել)

Պատասխան՝ 1.---------- *2.*----------

3.---------- *4.*----------

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Մեծաքանքար բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Հայաստանից ոտքը դուրս էր դնում թե չէ, անմիջապես հայրենի բնօրրանի, նրա պաղպաջուն աղբյուրների, քնքշօրոր արտերի ու ցորնաբույր հացի կարոտն էր զգում:

2. Մի անգամ ժնև քաղաքում բանաստեղծը կարոտից սկսում է արտասվել: 3. Նրան թվում է՝ ուր որ է կարոտից կմեռնի: 4. Հանկարծ մտաբերում է այդտեղ ապրող ֆրանսախոս մի հայուհու, որը վաղուց մոռացել էր թե՛ հայերենը, թե՛ իր հայ լինելը: 5. Մի տոպրակ ալյուր վերցրած՝ բանաստեղծն աճապարում է տիկնոջ մոտ՝ խնդրանքով, որ հաց թխի: 6. Կինը, որին զարմացնում է բանաստեղծի՝ տարօրինակ թվացող անըմբռնելի ցանկությունը, տեսնելով իրեն ուղղված թախանձող հայացքը, ընկրկում է, զիջում ու կատարում նրա կամքը: 7. Երախտագիտությամբ համբուրելով տիկնոջ ձեռքերը՝ բանաստեղծը վերցնում է հացն ու դուրս գալիս: 8. Տունդարձի ճանապարհին թվում էր՝ ինքն արդեն Հայաստանում է:

9. Հասնելով իր օթևանը, որ մի համեստ կացարան էր, բանաստեղծը մեծագույն հաճույքով ըմբշխնում է հացը, ու նրա հոգին՝ կարոտից տառապյալ ու փոթորկված, դույզն–ինչ խաղաղվում է:

II

1. Իմանալով, թե մեծ բանաստեղծն ինչու է իրեն երկու ժամով հացթուխ դարձրել, կինն ալեկոծվում է, հուզվում և որոշում հայերեն սովորել:

2. Անցնում են տարիներ...

3. Մի օր Երևանի ամբոխաշատ փողոցներից մեկում բանաստեղծը, ի զարմանս իր, հանդիպում է այն կնոջը: 4. Ա՜յ քեզ հրաշք. կինը խոսում էր մաքուր, անբասիր հայերենով: 5. Տեսնելով մեծ վարպետի՝ իր վրա սևեռված հայացքը՝ կինը, կենսաթրթիռ ժպիտը դեմքին, փարվում է նրան ու ասում.

— Սիրելի՛ վարպետ, ինձ հայերեն սովորեցրեց այն հացը, որ ես թխեցի այնտեղ՝ ժնևում:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. I հատվածից դու՛ս գրիր վայելում է (վայելել) բառի հոմանիշը:

Պատասխան՝ _____

18. I հատվածից դու՛ս գրիր մեկ հարակատար դերբայ:

Պատասխան՝ _____

19. I հատվածի 9-րդ նախադասությունից դու՛ս գրիր բաղադրյալ ստորոգյալը:

Պատասխան՝ _____

20. I հատվածից դու՛ս գրիր գերադրական աստիճանով դրված ածականը:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

21. I հատվածի 6-րդ նախադասությունը բաղկացած է

1) 2
2) 3
3) 4
4) 5

պարզ նախադասությունից:

22. I հատվածում ենթադրական եղանակի բայ պարունակող նախադասություն է՝

1) 1 -ը
2) 2 -րդը
3) 3 -րդը
4) 4 -րդը

23. I հատվածում միջադաս դերբայական դարձվածով նախադասություն է՝

1) 4-րդը
2) 5-րդը
3) 6-րդը
4) 8-րդը

24. II. 6 -րդ նախադասության մեջ որպես անորոշ դերբայ գործածված բայն է՝

1) փարվել
2) տեսնել
3) սևեռվել
4) ասել

25. Շաղկապի գեղչում կա

1) I. 4- րդ
2) I. 6 -րդ
3) I. 8-րդ
4) II. 5 -րդ

նախադասության մեջ:

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. II հատվածից դու՛ս գրիր կոչականը լրացման հետ:

Պատասխան՝ _____

27. II հատվածի 5-րդ նախադասությունից դու՛րս գրիր բոլոր դերանունները:

Պատասխան՝ _____

28. II հատվածից դու՛րս գրիր բացառական հոլովով դրված գոյականը:

Պատասխան՝ _____

29. I հատվածի 4-րդ նախադասությունից դու՛րս գրիր ժամանակի մակբայը:

Պատասխան՝ _____

30-32-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Հայաստանից ոտքը դուրս էր դնում թե չէ, հայրենիքի կարոտն էր զգում:
2) Մի անգամ ժնևում այնքան է վատանում, որ թվում է, թե չի դիմանալու:
3) Մի տոպրակ ալյուր վերցրած ֆրանսախոս մի հայ կնոջ մոտ է գնում, թախանձող հայացքով խնդրում, որ իր համար հաց թխի, ու կինը, տեսնելով դիմացինի վիճակը, կատարում է նրա կամքը:
4) Կնոջ փոթորկված հոգին ինչ-որ չափով խաղաղվում է, սակայն նա հայերեն սովորելու ցանկություն չի ցուցաբերում:

31. *Մի անգամ ժնև քաղաքում բանաստեղծը կարոտից սկսում է արտասվել*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) **բանաստեղծը** - գոյական, որոշյալ առում
2) **ժնև** - հատուկ գոյական, անորոշ առում
3) **քաղաքում** - գոյական, ներգոյական հոլով
4) **սկսում է** - բայ, սահմանական եղանակ, վաղակատար ներկա

32. Մի օր Երևանի ամբոխաշատ փողոցներից մեկում բանաստեղծը, ի զարմանս իր, հանդիպում է այն *կնոջը:*

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) ենթակա
2) ուղիղ խնդիր
3) ներգործող խնդիր
4) հանգման խնդիր